

90-ԱՄԵԱԿԻ ՈԳԵԿՈՉՈՒՄՆԵՐԸ ԳԵՐՄԱՆԻՈՅ ՀԱՅՈՑ ԹԵՄՈՒՄ

Թրիերի կաթոլիկ եկեղեցույ Առաջնորդարանի հրատերով 9-10.04.2005 թուականներուն, քեղոյն Մայր Տաճարին մէջ, որ Գերմանիոյ առաջին քրիստոնէական եկեղեցին է՝ կառուցած 4-րդ դարուն, քեղի ունեցաւ միջեկեղեցական արարողութիւն՝ նուիրուած Սրբազան Պապանքի աանդական ցուցադրման: Կաթոլիկ ուխտաւորներու կողքին, այդ օրը ներկայ էին նաեւ ուղղափառ եւ աւերարանական եկեղեցիներու հոգեւորականներ, որոնք Թրիերի առաջնորդ Ռայնհարտ եպս. Մարքսի նախագահութեամբ հանդիսատր արարողութիւն կարարեցին Մայր Տաճարին մէջ եւ ապա թափօրով ու սաղմոսերգութիւններով մուրք գործեցին Սրբազան Պապանքը պահպանող մարտուր: Այնուհետեւ Յունաց Տիեզերական Պարբիարքութեան ներկայացուցիչ եւ Գերմանիոյ Յոյն եկեղեցույ առաջնորդ Օգոստինոս մեքրոպոլիսի նախաձեռնութեամբ ներկայ ուղղափառ եկեղեցականները հոգեհանգըստեան պաշտօնով յիշեցին երջանկայիշաբակ Յովհաննէս Պօղոս Բ Պապին:

Արարողութենէն յետոյ Թրիերի Առաջնորդարանին մէջ քեղի ունեցաւ ընդունելութիւն, ուր ներկաներուն ողջոյնի եւ զնահաբանքի խօսք ուղղեց նաեւ Գերմանիոյ հայոց թեմի առաջնորդ Գերաշնորհ Տ. Գարեգին արքեպս. Պեքճեանը: Սրբազան Հայրը շեշտեց մեր օրերուն միջեկեղեցական յարաբերութիւններու եւ միասնական աղօթքի անյապաղ աներաժեշտութիւնը եւ փափաք յայտնեց, որպէսզի այս քարի Ապրիլի 24-ին բոլոր եկեղեցիներու ներկայացուցիչներն իրենց թեմերուն եւ համայնքներուն մէջ նոյնպէս յարգեն 1915 թուականի Մեծ եղեռնի անմեղ զոհերուն յիշաբակը:

Յաջորդ օր, Ապրիլի 10-ին, Սրբազան Հօր ուղեկցող Հոգեշնորհ Տ. Գարեգին արք. Յարութիւնեան եւ Տ. Տիրան արք. Պեքրոսյանը ճաշի ժամերգութեան պաշտօն կարարեցին կաթոլիկ հաւարացեալներու ներկայութեամբ: Պարմութեան մէջ սա առաջին անգամ էր, որ Հայ եկեղեցույ աղօթքները հնչեցին Կոստանդիանոս կայսեր եւ Հեղինէ կայսրուհիի կողմէ հիմնադրուած Թրիերի քաճարի կամարներուն ներքեւ:

13 Ապրիլ, Քէօլն. Հայոց ցեղասպանութեան 90-ամեակի ոգեկոչումներու շարքին այս քաղաքի յայտնի «Lev Kopelew Forum»-ին մէջ քեղի ունեցաւ եռօրեայ ձեռնարկ մը, որուն բացումը կարարուեցաւ ձեռամբ Գերշ. Տ. Գարեգին արքեպս. Պեքճեանի: Առաջնորդ Սրբազանին կ'ընկերակցէին Հոգշ. Տ. Սերովբէ վրդ. Իսախանեան եւ Հոգշ. Տ. Տիրան արք. Պեքրոսեան, Բարշ. սարկաւազներ Մայաթ Պոյաճեան եւ Գոռ Գէորգեան:

Սրբազան Հայրը ողջոյնի խօսքին մէջ իր գոհունակութիւնը յայտնեց բարձր մակարդակի այս ձեռնարկներու կազմակերպման առիթով եւ նշեց, որ այս օրերուն հայերու համար միախարական է քեսնել, որ գերմանական զանազան կարևոր հաստատութիւններ կը միանան Հայոց ցեղասպանութեան 90-ամեակի ոգեկոչումներուն եւ իրենց աջակցութիւնը կը բերեն Գերմանիոյ մէջ Հայոց Դարի ճանաչման ու մարդկային կեանքին սպառնացող ամէն քեսակի ոչնչացման արարքներուն պաշտօնական դարապարման:

Բացման հանդիսութեան հիմնական բանախօսն էր Ռ-ալֆ Ծօրփանօ: Ան նշեց, թէ Հայոց ցեղասպանութիւնը անվիճարկելի իրողութիւն է, փաստում հազարաւոր վաերագրերով, ուստի որպէս մարդկութեան դէմ գործադրում յանցագործութիւն, կարելի չէ վիճարկումի նիւթ ընել, այլ պէտք է պաշտօնապէս ընդունիլ եւ դատապարտել: Անկարելի է, որ պաշտօնական Թուրքիան յանրժօրէն կարենայ շարունակել ժխտումի բաղաբականութիւնը: Ծօրփանօ իր գոհունակութիւնը յայտնեց, որ Գերմանիոյ մէջ եւս սառոյց հալելու սկսած է, եւ աստիճանաբար աւելի ու աւելի յարակօրէն եւ կարևոր արեաններէն կը հնչէ Հայոց ցեղասպանութիւնը ճանչնալու եւ դատապարտելու պահանջը: Ան յոյս յայտնեց, որ ի մօտոյ Գերմանիոյ Խորհրդարանը եւս այս ուղղութեամբ կ'ընդունէ համապարասխան որոշում:

Հանդիսութեան երաժշտական բաժինը սրանձնած էին դաշնակահարուհի օրիորդ Շուն Յունանեան եւ անոր 12-ամեայ զարմուհի, ջութակահար Մարի Յունանեան:

Հանդիսութեան աւարտին րեղի ունեցաւ Հայաստանի արուեստագէտներ՝ քանդակագործ Ալբերտ Վարդանեանի եւ նկարիչ Վահան Թովիչեանի սրեղծագործութիւններու ցուցահանդէսին բացումը:

Ետօրեայ ձեռնարկներու ընթացքին ցուցադրուեցաւ նաեւ անցեալ փարի Հայաստանի մէջ նկարահանուած «Հայաստանեան զարուն - Ապրիլ 2004» փաստագրական ժապաւէնը: Իսկ մէկ օր անց րոքթ. Ռաֆֆի Զանդեան բանախօսեց «Հայաստանի գրականութիւնը ի ոգեկոչումն Յեղասպանութեան» նիւթով:

16 Ապրիլ, Նիւրնպէրկ. Հայոց Մեծ եղեռնի գոհերուն ի յիշատակ Քրիսթոս Եկեղեցոյ մէջ կատարուեցաւ հոգեհանգստեան պաշտօն Հոգ. Տ. Արիստակէս արեղայ Այվագեանի կողմէ: Արարողութեան ներկայ էին բազմաթիւ հայ եւ գերմանացի հաւաքացեալներ: Արարողութեան աւարտին եկեղեցոյ Սրահին մէջ կազմակերպուած էր յուշատօն մը, ուր դասախօսեց րոքթ. Մարգրիտ Ասոյեան-Լիսըը: Յուշատօնի երաժշտական բաժինը սրանձնած էին հայ երիտասարդներ:

23 Ապրիլ, Պէտլին. Բոնութեան ննթարկում գոհերու Յուշարձանին առջեւ նախ րեղի ունեցաւ ցոյց մը: Այնուհետեւ ժամը 15.30-ին, Պէտլինի Աւերարանական Մայր Տաճարին մէջ ի ներկայութեան շուրջ 700-800 հայ եւ գերմանացի մասնակիցներու, ինչպէս նաեւ պեւրական, կառավարական, դիւանագիտական, միջեկեղեցական բարձրաստիճան ներկայացուցիչներու րեղի ունեցաւ Հոգեհանգստի Միջեկեղեցական արարողութիւն մը:

Արարողութեան ընթացքին Գերմանիոյ հայոց առաջնորդ Գերաշնորհ Տ. Գարեգին արքեպս. Պեքճեան յանուն Գերմանահայ համայնքի Առաջնորդարանի եւ Կեդրոնական Խորհուրդի՝ նախ ողջունեց ներկաները, ապա գերմաներէն լեզուով ընթերցեց Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի՝ Հայոց ցեղասպանութեան 90-ամեակի առիթով հրատարակուած Սրբաբարտ Կոնդակը: Այնուհետեւ Յիշատակի խօսքով հանդէս եկաւ Գերման-Աւերարանական Եկեղեցոյ Ընդհանուր Խորհուրդի նախագահ, եպիսկոպոս Վովկանկ Հուպէր: Ան անդրադառնալով ողբերգութիւններու եւ մարդկութեան դէմ գործուած յանցագործութիւններու ոգեկոչման կարևորութեանը, Հայոց ցեղասպանութիւնը որակեց իբրև պարմական անժխտելի իրողութիւն, որը պէտք է ընդունուի եւ դատապարտուի յա-

նուր մարդկության կողմ: Ան Գերման-Անկարանական Եկեղեցույ եւ գերմանացի ժողովուրդի անունով ներողութիւն խնդրեց հայ ժողովուրդէն, միեւնոյն ժամանակ պահանջելով, որ գերմանական Պունդեթակը պաշտօնապէս ճանչնայ Հայոց ցեղասպանութիւնը եւ դատարարէ անոր կազմակերպիչները, քանի որ միայն այս ճանապարհով կարելի պիտի ըլլայ սպեղանի գրինել դեռես արիւնոդ եւ չսպիացող վերքերը:

Յիշարակի ձեռնարկը շարունակուեցաւ նոյն օրը, երեկոյեան ժամը 18-ին Պեռլինի Խորհրդարանի շէքին մէջ, ուր ողջոյնի խօսք արտասանեց Պեռլինի Խորհրդարանի նախագահ պրն Վալթեր Մոմկեր, իսկ հիմնական բանախօսն էր պարմաբան եւ հրապարակախօս Միխայել Եայսման: Խորհրդարանի նախագահը եւս Հայոց ցեղասպանութիւնը որակեց որպէս անժխարելի իրողութիւն եւ թուրքական իշխանութիւններէն պահանջեց ճանչնալ զայն եւ հաշտուիլ իր պարմութեան հետ:

Ձեռնարկներուն իր մասնակցութիւնը բերաւ նաեւ Գերմանիոյ մէջ Հայաստանի Հանրապետութեան դեսպանուհի, փիլիկն Կարինէ Ղազինեան:

23 Ապրիլ, Քէօլն. Առաջնորդանիստ Ս. Սահակ-Մեսրոպ Մայր եկեղեցույ մէջ ինչպէս ամէն փարի, այս փարի եւս ոգեկեցուեցաւ 1915/16 թուականներուն Հայոց ցեղասպանութեան զոհերու անմահ յիշարակը: Ներկայ էին Գերմանիոյ կուսակցութիւններու ներկայացուցիչներ եւ թոյր Եկեղեցիներու հոգեւոր պետերը: Երեկոյեան ժամը 18-00-ին սկսած ոգեկեցման հանդիսութեան բացման խօսքը համայնքի արեւնապետուհի փիլիկն Միւնո Նիքբայի կողմէ կարարուել էրք, յաջորդաբար խօսք առին շուրջ ութը ներկայացուցիչներ: Ծար փրկավորիչ էր ելոյթը Պրանպրընպուրկ նահանգի երիտասարդութեան ու մշակոյթի նախարար Ծթէֆան Բայխրին, որ յայտնեց, թէ՛ «Հայոց ցեղասպանութիւնը նախապէս կազմակերպուած էր, ինչպէս Ծոպի համար պարտապարտուած լապորաթուարը, որ հրէական ահաւոր հալածանքներու պարմութեան ընթացքին փետանք»:

Այս խօսքերով ան կամուրջը երկարեց մինչեւ գերմանական կայսրութեան: Յարգելի նախարարը Գերմանիոյ մէջ առաջիններէն էր, որ Հայոց ցեղասպանութիւնը Պրանպրընպուրկ նահանգի մէջ դպրոցական դասագիրքերուն մէջ առնել փուա: Ան ընդգծեց նաեւ գերմանական կայսրութեան պարասխանապու դերը, առանց որուն Յեղասպանութիւնը կարելի չէր որ փեղի ունենար: Ներուարար Գերմանիան ու Թուրքիան պարպականութիւն ունին հայերէ ներողութիւն խնդրելու, որպէսզի բիրաւոր զոհերը ունենան հոգոյ հանգըստութիւն եւ Թուրքիան կարենայ երոպական միութիւն մտնել այդ ճանաչումէն ետք:

20 Ապրիլ, Ֆրանքֆուրթ. Գերմանիոյ հայոց Առաջնորդարանի եւ Գերմանահայոց Կեդրոնական Խորհուրդի միասնական ու կեդրոնական ձեռնարկը փեղի ունեցաւ 20 Ապրիլին, Գերմանիոյ Ֆրանքֆուրթ քաղաքի հանրաժանօթ «Paulskirche» սրահին մէջ: Պարոյ հիւրերու շարքին էին գերմանական պետական եւ քաղաքական կարեւոր անձնաւորութիւններ:

Ձեռնարկը բացուեցաւ Գերմանահայոց Կեդրոնական Հոգեւոր Խորհուրդի արեւնապետ փոքթ. Ծաւարշ Յովասափեանի խօսքով: Այնուհետ ողջոյնի խօսքեր արտասանեցին Գերմանիոյ մէջ Հայաստանի Հանրապետութեան դեսպանուհի, փիլկ. Կարինէ Ղազինեան եւ Գերմանիոյ Ղեսէն նահանգի վարչապետ պրն Ռօլանդ Թոյսի ներկայացուցիչը, նահանգի

կառավարության նախագահ Կերոլպ Դիիբե: Տիմնական բանախօսն էր հայ եւ գերմանացի շրջանակներուն քաջածանօթ եւ Տայոց ցեղասպանութեան իրողութեան փարածման եւ անոր ճանաչման պայքարի աննկուն գործիչ, գրող-հրապարակախօս Ռալֆ Ծօրփանօն, որուն բանի մը ամիս առաջ Ամենայն Տայոց Վեհափառ Տայրապետը պարգևատրած էր Տայ Եկեղեցոյ «Սուրբ Մահակ – Սուրբ Մեսրոպ» պատույ բարձր շքանշանով: Պրն Ծօրփանօն պարմական ակնարկ մը կատարելէ ետք, իր յուզումնալի եւ փայլուն բանախօսութեան մէջ կոչ ըրաւ չխեղդել յիշողութիւնն ու ճշմարտութիւնը եւ արդարութեան յաղթանակին հասնելու հայ ժողովուրդի անկապտելի իրաւունքը:

Ձեռնարկը եզրափակուեցաւ Գերմանիոյ հայոց առաջնորդ Գարեգին արքեպս. Պեքճեանի՝ զոհերու յիշարակին մաքրուում Տոգեհանգստեան աղօթքով:

Երեկոյի երաժշտական բաժինը սրանձնած էր ջութակահար Սերկէյ Խաչատրեան, դաշնակի ընկերակցութեամբ մօրը՝ Իրինա Յովհաննիսեանի եւ քրոջը՝ Լուսինի:

24 Ապրիլ, Պրէմըն. Տայոց ցեղասպանութեան 90-ամեակի օրը, 24 Ապրիլ 2005-ը, աննախադէպ օր մըն էր Պրէմընի եւ ընդհանրապէս գերմանահայութեան համար: Այդ օրը քաղաքին մէջ բացումը պիտի կատարուէր Պրէմընի քաղաքային իշխանութիւններու եւ անձնապէս զխաւոր քաղաքապետ պրն Տեննինկ Շէրֆի համաձայնութեամբ կանգնեցում Տայոց ցեղասպանութեան զոհերու յիշարակին նուիրում Խաչքար-Յուշարձանի: Մինչ այդ Գերմանիոյ մէջ Յեղասպանութեան զոհերու յուշարձան մը փեղադրելու ուղղութեամբ փորձեր եղած էին, բայց հայութեան խնդրանքները մերժուած էին համապատասխան մարմիններու կողմէ, իսկ լավագոյն պարագային արփօնած էին յուշարձան մը կանգնեցնել, առանց սակայն արփօնելու նշել «Յեղասպանութեան զոհեր» մակագրութիւնը, ինչպէս է պարագան Գերմանիոյ Շթութկարթ քաղաքին գերեզմանապան հայկական բաժնին մէջ փարիներ առաջ Գերմանիոյ կանգնեցում յուշարձանը: Միակ բացառութիւնը քանի մը փարիներ առաջ Գերմանիոյ հայոց Առաջնորդութեան ջանքերով Գերմանիոյ Քէվելալեր փոքրիկ ուխտավայր-քաղաքի ուղղափառներու մաքրան մէջ ի յիշարակ Տայոց ցեղասպանութեան բիւրաւոր զոհերու փեղադրում խաչքարն էր, որուն արփօնութիւն սրացում էր եկեղեցական շրջանակներու կողմէ:

Քաղաքի զբօսայգիներէն մէկուն մօտ փեղադրում շուրջ մէկեկէս մետր բարձրութեամբ Խաչքար-Յուշարձանին գերմաներէնով գրում է. «Օամանեան Տայրութեան մէջ փեղի ունեցած Տայոց ցեղասպանութեան 90-ամեակի առիթով մենք կ'ոգեկոչենք մէկեկէս միլիոն նահապտակ հայերը»:

Խաչքար-Յուշարձանի բացումէն առաջ Պրէմընի Սուրբ Մթէֆանի աւերարանական եկեղեցոյ մէջ փեղի ունեցաւ Տայոց ցեղասպանութեան յիշարակին նուիրում Միջեկեղեցական արարողութիւն մը, որուն յանուն Առաջնորդարանի իր մասնակցութիւնը բերաւ Տոգճ. Սերովբէ վրդ. Իսախանեան: Ան նախ յանուն գերմանահայ համայնքի իր նրախարագիւրութիւնը յայտնեց քաղաքային իշխանութիւններուն՝ իրենց բարեացակամ եւ արդարադատ որոշման համար, այնուհետեւ ընթերցեց Գարեգին Բ Ամենայն Տայոց Վեհափառ Տայրապետի Սրբաբառ Առնդակը Տայոց ցեղասպանութեան 90-ամեակի առիթով:

Արարողութենէն ետք, նոյն եկեղեցոյ մէջ կազմակերպուեցաւ նաեւ Յիշարակի ձեռնարկ մը, որուն բացումը կատարուեցաւ Խաչքար-Յուշարձանի փեղադրումը հաջողուցած «Նայ Մշակույթի Ժառանգ Միակողման» հասարակութեան պատասխանաբար փոքր.

Էլիզ Պիզանցի կողմէ: Այս խօսք փրուեցաւ Պրեմիերի գլխաւոր քաղաքապետ պրն Նենինկ անկեղծ խօսքին մէջ փեղեկացուց, որ Յուշարձան կանգնեցնելու համաձայնութիւն իրենք փութած են, որովհետեւ եղած են եւ կուզեն մնալ բացխօսութեան եւ ժողովրդավարական արժէքներով ընթացող քաղաք մը, ուր բնականաբար Նայերն ալ իրատունք ունին յիշելու եւ ոգեկոչելու իրենց բիրտաւոր գոհերը:

Խօսքեր արտասանեցին նաեւ գերմանահայութեան քաջածանօթ գրող-հրապարակախօս փոքր. Եօիւրն Մանկելսըն, հայկական հարցերու շուրջ բազմաթիւ հրատարակութիւններ կատարած «Տօնաթ» հրատարակչաբան պատասխանաբար պրն Նելմութ Տօնաթ:

Արարողութենէն ետք Քերմանիոյ զանազան քաղաքներէն եկած շուրջ 1500 Նայերու եւ ոչ Նայերու թափօրը շարժուեցաւ դէպի Խաչքար-Յուշարձան: Ծանապարհին թափօրին միացաւ նաեւ քաղաքապետ պրն Շերֆ: Խաչքար-Յուշարձանէն քիչ հեռու մահակաւոր ոսփկաններու եւ շուներու հսկողութեամբ ցոյցի էին հաւաքուած շուրջ 300-400 թուրքեր, որոնք կը վանկարկէին «Թ-իւրքիւ, թիւրքիւ» եւ կամ «Շերֆ-դասան, կորսուիք»:

Յուշարձանին մօտ Սերովբէ Նայր Սուրբի եւ սարկաւագ-դպիրներու կողմէ կատարուեցաւ հոգեհանգստեան արարողութիւն, ապա օրհնուեցաւ Խաչքարը: Յետ օրհնութեան Նայր Սուրբը հայերէն եւ գերմաներէն լեզուներով դիմեց հաւաքուածներուն՝ ըսելով. «Այս Խաչքար-Յուշարձանը հայութեան քարեղէն աղօթքն է առ Աստուած ի յիշարակ մեր գոհերու, բայց նաև վկայութիւնն է, որ ճշմարտութիւնը չի մեռնիր, ճշմարտութիւնը կարելի չէ յափտնապէս խեղդել: Հայոց ցեղասպանութիւնը եթէ ոչ այսօր, եթէ ոչ վաղը, ապա ի վերջոյ պիտի եւ պետք է ճանցուի մարդկութեան կողմէ եւ նաև այսօրեղ Քերմանիոյ մէջ: Մեզի կը մնայ բոլոր օրինաւոր ու քաղաքակիրթ միջոցներով պայքարիլ արդարութեան յաղթանակի համար»:

Խօսք առաւ նաև քաղաքապետ պրն Շերֆ, որ մէկ անգամ ես նշելով իր հաւատարմութիւնը ժողովրդավարական եւ բազմակարծութեան սկզբունքներուն, կոչ ըրաւ քաղաքի թուրք բնակչութեան, որոնք թիւր 25-30 հազար է, ջահմանափակուիլ կեղծ եւ եւրոպական մարածողութեան անհարիր արժէքներով, պատրաստ ըլլալ պատմական ցաւալի էջերուն իրացման ու բաց քննարկման եւ իր քայլը ջնկատրել հակաթրքական դրսեւորում: Քաղա-



քապեպրը եւ հայր Սերովբէ ծաղկեպասակ գերեզմանին Խաչքար-Յուշարձանին, որմէ ետք Յուշարձանը ողողուեցաւ բերուած ծաղիկներով:

Խաչքար-Յուշարձանի փեղադրման եւ բացման հանդիսութեան անդրադարձան գերմանական հեռափոխիլի կայաններ եւ մամուլի օրկաններ: Իսկ թրքական «*Մարիթ*» լրագիրը յուշարձանի բացումը խորագրեց. «*Քեկի յուշարձանը բացուեցաւ*»:

Ապրիլ 24, Պապրն-Վիրթեմպերկ. Ոգեկոչման հանդիսութիւն փեղի ունեցաւ հայ եկեղեցական համայնքի Մշակութային Միութեան ու Էսլինկէնի «Մարալ» Մշակութային եւ Մարզական Միութեան համապեղ նախաձեռնութեամբ: Ձեռնարկը կը կրէր՝ «Տօլօքոսթ Տօլօքոսթէն առաջ» անունը. Էլի Վզելիի խօսքերով:

Յուշահանդիսութիւնը սկսաւ ժամը 10.00-ին, հոգեհանգստեան արարողութեամբ, Ծթութկարթի կեդրոնական գերեզմանապան մէջ գրնուող հայ նահապարակներու յուշարձանին առջեւ: Արարողութեան հանդիսապետեց հոգ. Տ. Օշական վրդ. Կիւլիկեան՝ առընթեր ունեւալով հոգ. Տ. Արիստակէս արք. Այվազեանն ու դպրաց դասի անդամները: Ներկայ էր նաեւ Անկարանական եկեղեցոյ շրջանի ներկայացուցիչ Էրնսթ-Լուրֆիք Ֆէթթերը:

Գերեզմանապան արարողութենէն ետք Կեօփինկէնի Ս. Խաչ եկեղեցոյ մէջ եկեղեցական արարողութիւն մը եւս կատարուեցաւ հայր Արիստակէսի հանդիսապետութեամբ, ապա ներկաները հուարուեցան հայ Տան սրահին մէջ ուր գլխաւոր դասախօսն էր Տոմինիք Յ. Շալլեր:

Նոյն օրը Միւնխէնի մէջ Պավարեայի հայ հայրենակցական Միութեան, հայ եկեղեցական համայնքի ու հայկական հարցերու Ինստիտուտի նախաձեռնութեամբ կատարուած յուշարձանին եւս հայր Արիստակէս նախագահեց, կատարելով հոգեհանգստեան պաշտօն եւ կարդալով Յնդասպանութեան նիւթով դասախօսութիւն մը:

27 Ապրիլ, համպուրկ. հայոց ցեղասպանութեան 90-ամեակի առիթով ձեռնարկ մըն ալ կազմակերպուած էր համպուրկ քաղաքի Կաթողիկէ Կաճառին կողմէ, որուն պատասխանապարտն է համպուրկահայութեան քաջաձանօթ եւ մեր եկեղեցոյ ազնիւ բարեկամ Մօնսինէօր Վիլմ Մանսերս: Կաճառի հանդիսութեանց դահլիճին մէջ, որ լեցուն էր հայ եւ օտար ներկաներով, փեղի ունեցաւ Յիշարակի Ձեռնարկ մը, որուն բացումը կատարուեցաւ Մօնսինէօր Մանսերսի կողմէ: Յաջորդաբար խօսք առին քաղաքի Կաթողիկէ փոխ-եպիսկոպոս փոքր. հանս-Եօխէն Եաշթէ, Անկարանական եկեղեցոյ եպիսկոպոստի Եփսըն, Գերմանիոյ հայոց առաջնորդ Գարեգին արքեպս. Պեթճեան: Իսկ հիմնական բանախօսն էր յայտնի հրապարակախօս Ռալֆ Ճօրպանօ:

Ձեռնարկի աւարտին Կաթողիկէ Կաճառին կից Սուրբ Միքայել եկեղեցոյ մէջ փեղի ունեցաւ Միջեկեղեցական արարողութիւն եւ հոգեհանգստեան պաշտօն, որու ընթացքին յիշարակի խօսքը արտասանեց համպուրկի աւերարանական եպիսկոպոստի փիկ. Մարիա Եփսըն: